

ՀԱՍՄԻԿ ՏԻԳՐԱՆՅԱՆ

ՀՀ ՏՄՊՊՀ իրավաբանական վարչության վարչական վարույթի
բաժնի գլխավոր մասնագետ,
ՀՀ քաղաքացիական ծառայության 3-րդ դասի խորհրդական,
իրավագիտության մագիստրոս



ՄՐՅԱԿՑԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԷՎՈԼՅՈՒՑԻԱՆ ԵՎ ՉԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Հոդվածում հեղինակը ներկայացնում է մրցակցային իրավունքի նորմերի էվոլյուցիան անտիկ ժամանակաշրջանից մինչև մեր օրերը՝ ուսումնասիրելով և վերլուծելով օրենքներ և այլ իրավական ակտեր, այդ ակտերի կիրարկումը, վերլուծելով դատական նախադեպերը: Սույն հոդվածի շրջանակներում միաժամանակ դիտարկվում է ժամանակակից մրցակցային իրավունքի ձևավորումը ԱՄՆ-ում, ԵՄ-ում և ՀՀ-ում, կատարվում է համեմատական վերլուծություն՝ վեր հանելով մրցակցային իրավունքի տարբեր մոդելների նմանությունները և տարբերությունները:

Հիմնաբառեր- անտեսական մրցակցություն, մրցակցային իրավունք, հռոմեական իրավունք, արեմական իրավունք, մրցակցային մարմիններ, սենաշնորհ, ԱՄՆ մրցակցային իրավունք, ԵՄ մրցակցային իրավունք, ՀՀ մրցակցային իրավունք:

Տնտեսական մրցակցության պաշտպանության նպատակով իրավանորմեր գրվել են ավելի քան 2,5 հազարամյակ առաջ: Պատմությանը հայտնի առաջին կարգավորումները հայտնաբերվել են դեռևս մ.թ.ա. 4-րդ դարում Աթենական իրավունքում: Հունական քաղաք-պետություններից Աթենքի մեծաքանակ բնակչության համար առաջին անհրաժեշտության սննդամթերք հացահատիկը ներմուծվում էր, քանի որ Աթենքի բնակլիմայական պայմանները նպատակահարմար չէին հացահատիկի աճեցման համար: Մ.թ.ա. 388 թվականին հացահատիկ ներմուծողները (emporoi) կտրուկ սահմանափակեցին հացահատիկի ներմուծումը Աթենք, ինչն էլ հանգեցրեց հացահատիկի գնի կտրուկ բարձրացմանը: Հացահատիկի գնի իջեցման նպատակով հացահատիկի գնի կարգավորման համար պատասխանատու Աթենական պաշտոնյան (sitophylakes) քաղաքականություն մշակեց՝ թույլ տալով առևտրականներին (sitopolai) հացահատիկի ձեռքբերման բանակցությունների ընթացքում գաղտնի համաձայնություն կնքել ներմուծողների հետ: Այս ծրագիրը, սակայն, հաջողություն չունեցավ: Առևտրականները, գաղտնի համաձայնության գալով, որոշեցին չմրցակցել և հացահատիկ ներկրողների հետ բանակցելով՝ կարողացան գնել ամբողջ հացահատիկը բավականին ցածր գնով և գաղտնի կուտակել հացահատիկի պաշարներ՝ բնակիչներին ցածր գնով վաճառելու նպատակով: Նշվածի վերաբերյալ հարկ է հավելել, որ Աթենական առևտրային օրենքներով սենաշնորհը կանխելու նպատակով արգելվում էր նշված չափաբանակից ավել ներմուծել և վաճառել, թույլատր-

վում էր պահեստավորել ձեռք բերված հացահատիկի մինչև 1/3՝ այն էլ կարճ ժամանակով, իսկ հացահատիկի 2/3 պահանջվում էր անմիջապես վաճառել քաղաքացիներին՝ այն էլ սահմանված գնից ոչ քանկ: Առևտրականների վերը նկարագրված գործողությունները շուտով բացահայտվեցին և նշված առևտրականները հազիվ փրկվեցին մահապատժի դատավճռից, քանի որ այդ ժամանակ Աթենական սենատը նշված առևտրային օրենքները խախտելու համար դեռևս առանց դատավարության մահվան դատապարտելու իրավասություններ չունեցավ: Աթենական խորհրդի հրամանագրով մեղադրանք առաջադրվեց նշված արեմական առևտրականների նկատմամբ՝ վերջիններիս մեղադրելով գաղտնի համաձայնություն կնքելու միջոցով սենաշնորհի ձեռք բերելու և հացահատիկի մեծաքանակ պաշարներ գաղտնի կուտակելու մեջ: Տեղի ունեցավ դատավարություն իմպիչմենտի ընթացակարգով և սենատի առջև, որը ենթադրում էր մեղադրյալների արդարացում սենատի կողմից բոլոր հարցերին բավարար պատասխաններ տալու պարագայում: Այս դատավարության ընթացքում սենատորներից մեկը ելույթ ունեցավ՝ արդարացնելով առևտրականների գործողություններն այն պատճառաբանությամբ, որ նրանց գաղտնի համաձայնությունը և հացահատիկի պաշարների գաղտնի կուտակումը հանրային շահի՝ Աթենքի բնակչության համար կենսական կարևորություն ունեցող հացահատիկի գնի նվազեցման նպատակ է հետապնդել: Միաժամանակ նշված սենատորը նշեց, որ իրենք՝ սենատորները, երդվյալ ատենակալների պես արդար որոշում պետք է կայացնեն: Առևտրա-

կաններն էլ կիրառեցին *remotio criminis* պաշտպանությունը՝ մեղադրելով հացահատիկի գնի կարգավորման համար պատասխանատու Աթենական պաշտոնյային իրենց հանցավոր արարքի դրդելու համար: Մենատը չկարողացավ որոշում կայացնել այս գործում, և գործը տեղափոխվեց հելլենական ընդհանուր իրավասության դատարան: Նշված դատավարության ընթացքը ևս հետաքրքրություն է ներկայացնում այն տեսանկյունից, որ այն ժամանակակից դատավարության տարրեր է պարունակում. դատավարությունը սկսվում է բացման խոսքով, որից հետո հնչում է մեղադրական ճառը, փաստարկները և հիմնավորումները, որոնց հաջորդում է ամբաստանյալ առևտրականների պաշտպանական ելույթը և նրանց հարցաքննությունը: Նշված դատավարությանը ներկա էին նաև երդվյալ ատենակալները: Ցավոք, այս դատավարության դատավճռի արդյունքների վերաբերյալ պատմական փաստաթղթերում տեղեկություններ չեն պահպանվել, իսկ նշված իրավախախտման և դատավարության վերաբերյալ տեղեկությունները հայտնի են դարձել սույն գործով մեղադրող կողմի հռետոր Լիսիասի (*Lysias*) կողմից գրված ելույթի տեքստից: Նշված իրավախախտումը և դատավարությունը պատմությանը հայտնի մրցակցային իրավունքի խախտման ամենահին գործն է:

Տնտեսական մրցակցության պաշտպանությանն ուղղված՝ պատմության հայտնի հաջորդ կարգավորումները վերաբերում են Հռոմեական հանրապետության ժամանակաշրջանին: Մասնավորապես մ.թ.ա. 50 թվականին «Հուլիոսի օրենքի դրույթներում» (*Lex Julia De Anona*) կարգավորումներ էին ամրագրվել, համաձայն որոնց՝ արգելվում էր արհեստականորեն պակասորդ ստեղծելով՝ բարձրացնել հացահատիկի վաճառքի գինը, իսկ նշված կանոնի խախտումը ենթադրում էր իրավախախտ առևտրականների նկատմամբ ֆինանսական պատասխանատվության միջոցի կիրառում՝ բարձր տուգանքների սահմանմամբ, կամ այդ առևտրականներին արգելվում էր այլևս առևտրով զբաղվել: Այս կարգավորումներով միաժամանակ արգելվում էր ուղակիորեն, դիտավորյալ դադարեցնել, հետաձգել կամ սահմանափակել հացահատիկի ներուծումը (մատակարարումը) նավերով, իսկ այս կանոնի խախտումը հանգեցնում էր քրեական պատասխանատվության, ընդհուպ մինչև արտոման: Վերոնշյալ կարգավորումների նպատակը ոչ միայն արգելել էր անհատ վաճառականներին գերշահույթ ստանալ, այլև թույլ չտալ համաձայնեցված գործողությունների արդյունքում շուկայական գների խաթարումը:

Մրցակցային իրավունքի մյուս ուղղության՝ անբարեխիղճ մրցակցության գործողության ար-

գելմանն էր ուղղված Ադրիանոս կայսեր օրոք (117-138) կիրառվող արգելքը. մասնավորապես արգելվում էր հացը կշռելիս սխալ քաշ նշել (խաբել գնորդին իրական քաշի վերաբերյալ), իսկ այս նորմի խախտումը ենթադրում էր արտաքսում կայսերական որոշմամբ (*decretum*):

Այնուհետև, Գայոս Ավրելիանոս Վալերիանոս Դիոկղետիանոսի գահակալման ժամանակաշրջանում, 301 թվականին ընդունվեց «Առավելագույն գների հրովարտակը» (*Edict on maximum price*), որի նպատակն էր զսպել առաջին անհրաժեշտության ապրանքների գների բարձրացումը՝ կարգավորելով գործող սակագները: Նշված հրովարտակը նաև նպատակ էր հետապնդում կանխել սննդամթերքի պաշարների քողարկման միջոցով արհեստական պակասորդի ստեղծումը: «Առավելագույն գների հրովարտակը» խախտումը հանգեցնում էր քրեական պատասխանատվության՝ մահապատժի:

Հաջորդը բյուզանդական կայսր Չենոնն էր, որի գահակալման ժամանակաշրջանում՝ 483 թվականին, հրապարակվեց Չենոնի սահմանադրությունը, որի նպատակն էր պաշտպանել սպառողներին առաջին անհրաժեշտության սննդամթերքի և կենցաղային ապրանքների գների արհեստական բարձրացումներից. փաստորեն այս սահմանադրության ընդունումն ուղղակի հարձակում էր *de facto* կամ *de jure* մենաշնորհների վրա: Այս սահմանադրությունն արգելում էր առևտրականների գաղտնի համաձայնությունները, որոնք նպատակ էին հետապնդում սահմանափակել ապրանքների վաճառքը կամ խաթարել շուկայական գները: Միաժամանակ, կայսերական հրովարտակով բացառիկ իրավունքներ տրված մենաշնորհների գործունեությունը կարգավորելու նպատակով նշված սահմանադրությունը սահմանում էր նորմեր՝ կարգավորելով ինչպես նախկինում բացառիկ իրավունք ստացած, այնպես էլ ապագայում նման իրավունք ստացող մենաշնորհների գործունեությունը: Չենոնի սահմանադրությամբ միաժամանակ արգելվում էր առևտրականների, բանվորների և արհեստավորների միությունը: Այս սահմանադրությամբ ամրագրված կանոնների խախտումը ենթադրում էր պատասխանատվության խիստ միջոցների կիրառում, ինչպիսիք են ունեցվածքի բռնագավթումը և ցմահ արտաքսումը: Ժամանակը, սակայն, ցույց տվեց, որ Չենոնի սահմանադրությունը արդյունավետ չէր կարտելիների և մոնոպոլ գործողությունների դեմ պայքարում: Այդ իսկ պատճառով բյուզանդական կայսր Հուստինիանոս Առաջինը հարկադրված էր օրենսդրական փոփոխություններ կատարել՝ որդեգրելով մենաշնորհների կարգավորման այլ ճանապարհ: Մասնավորապես, Հուստինիանո-

սը հիմնադրեց հռոմեական տնտեսություն՝ հիմնված վարձատրվող պաշտոնյաների միջոցով կառավարվող պետական մենաշնորհների վրա, այն իրավական ամրագրում ստացավ Հուստինիանոսի Դիգեստներում (Digesta): Միաժամանակ, հրապարակվեց կայսերական նոր սահմանադրությունը, իսկ մինչ այդ եղած օրենքներն ու ժողովածուները ուժը կորցրած ճանաչվեցին: Սակայն, ինչպես վկայում են պատմական փաստաթղթերը, պետական մենաշնորհների այս համակարգը ևս շատ հեռու էր կատարյալ լինելուց. այն հնարավորություն տվեց կաշառված պաշտոնյաներին առանց քրեական պատասխանատվության վախի զգացման գերշահույթներ ստանալ քաղաքացիներից՝ բարձրացնելով գները ⁷:

Հետագայում վերոնշյալ նորմերն ընդլայնվեցին և ամրագրվեցին միջնադարյան առևտրային իրավունքում (lex mercatoria): Այսպես, օրինակ, 1322-1325 թվականներին տնտեսական մրցակցության պաշտպանության նպատակով նորմեր ամրագրվեցին Ֆլորենցիայի մունիցիպալ օրենքներում, համաձայն որոնց արգելվում էին մենաշնորհների համաձայնեցված գործողությունները և առևտրային միությունները, իսկ այս նորմերի խախտումը ենթադրում էր պատասխանատվության միջոցի կիրառում՝ ունեցվածքի բռնագրավման և (կամ) արտաքսման միջոցով: Այս օրենքներով միաժամանակ անվավեր էին համարվում նախկինում տրամադրված բոլոր բացառիկ իրավունքները: Բոհեմիայի (Չեխիայի) դքսությունում Վենեսլաս (Wenceslas) II-ի կառավարման տարիներին ընդունվեց «Մետաղների մասին սահմանադրական օրենքը» (constitutiones juris metallicae), որը դատապարտում էր վաճառականների կողմից հանքաքարի գնի բարձրացումը: Միաժամանակ, Սրբազան Հռոմեական կայսրության կայսր Կառլ V-ի կառավարման տարիներին ևս օրենք ընդունվեց, որով կանխարգելվում էր Նիդեռլանդներում առևտրականների և արհեստավորների հիմնադրած մենաշնորհների կողմից անբարեխիղճ պայմանագրերի հետևանքով վնասի պատճառումը:

Շուկաներում բարեխիղճ առևտուր սպառնալից էր նպատակով կարգավորումներ են գտնվել նաև անգլիական Դատաստանագրքում (Doomsday book/Book of Winchester) ¹⁰, որտեղ նշվում է, որ անգլիական թագավոր Էդուարդ Խոստովանողի (Eduard the Confessor) օրոք ամբողջ Անգլիայի տարածքում տեղի էին ունենում պատժիչ և արգելող գործողություններ, որոնցից էր նաև գնի արհեստական բարձրացման արգելումը (prohibition of foresteal ¹¹), իսկ նշված արգելի խախտումը ենթադրում էր պատասխանատվության միջոցի կիրառում անարգանքի սյունին գամելու, կարգապահական

տույժի կիրառման կամ տուգանքի նշանակման, ինչպես նաև անարգանքի աթոռին նստեցնելու միջոցով: Դատաստանագրքում առկա տեղեկություններից նաև հայտնի է դարձել, որ Անգլիայում 1266 թվականին ընդունվեց օրենք, որով սահմանվեցին հացի և զարեջրի գները՝ դրանք համապատասխանեցնելով քաղաքացիական և քրեական գործերով անգլիական դատարանների վճիռներով (assizes) սահմանված հացահատիկի գներին: Հետագայում Անգլիայի թագավոր Էդվարդ III-ի օրոք՝ 1349 թվականին, ընդունվեց «Բանվորների կանոնադրությունը» (Statute of Laborers), որը սահմանում էր սննդամթերքը ողջամիտ գնով վաճառելու պահանջ ¹²: Այնուհետև, Անգլիայի Հենրիխ VIII թագավորի գահակալման ընթացքում, նպատակ ունենալով կայունացնել արտերկրից մատակարարման տատանումների հետևանքով փոփոխվող գները, 1553 թվականին սակագներ սահմանվեցին սննդամթերքի համար ¹³: Չնայած նշված կարգավորումներին՝ Անգլիայում բավական երկար ժամանակ առևտրականներին և արհեստավորներին ներկայացնող կազմակերպությունների համար սահմանվում էր բացառություններ հակամենաշնորհային օրենքներում: Սակայն, իրավիճակը փոխվեց 1835 թվականին «Մունիցիպալ Կորպորացիաների մասին» օրենքի ընդունմամբ, երբ վերացվեցին բացառությունները:

15-րդ դարում միջազգային տնտեսական հարաբերությունները սկսեցին արագորեն զարգանալ, որը հանգեցրեց նաև գործարարների նկատմամբ վերաբերմունքի փոփոխության: Այսպես, օրինակ, 1558 թվականին Անգլիայում ներդրվեց «արդյունաբերական մենաշնորհների լիցենզավորման» համակարգը, որը ժամանակակից արտոնագրման համակարգի նախատիպն է ¹⁴: «Արդյունաբերական մենաշնորհների լիցենզավորումը» լիցենզավորման ընթացակարգ էր, որով միապետի որոշմամբ հնուտ և արհեստավարժ մասնագետներին տրվում էր արդյունաբերության որոշ ճյուղերում գործունեություն իրականացնելու մենաշնորհ՝ բացառիկ իրավունքով, որի նպատակն էր նպաստել նորարարության և արտադրության զարգացմանը: Սակայն, կարճ ժամանակ անց պարզ դարձավ, որ այդ համակարգում առկա էին բազմաթիվ չարաշահումներ, իսկ լիցենզավորման այս համակարգը ամենևին չէր ծառայում իր նպատակին՝ տրամադրելով այնպիսի մենաշնորհ բացառիկ իրավունքներ (անգամ ամենօրյա օգտագործվող ապրանքներ աղի և օսլայի արտադրության ոլորտներում), որոնք ամենևին չէին նպաստում ինչպես նորարարությունների, այնպես էլ արտադրության զարգացմանը: Բազմաբնույթ և աննպատակային մենաշնորհների շնորհումը թագուհի Ելիզաբեթա I-ի (1533-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

1603թթ) կողմից առաջացրեց պառլամենտի խիստ դժգոհությունը, այդ իսկ պատճառով Դարսին ընդդեմ Ալլինի (Edward Darcy Esquire v Thomas Allin of London Haberdasher case (1602))¹⁵ գործում բացառիկ իրավունք տալու նպատակահարմարությունը թողնվեց դատարանի որոշմանը: Մասնավորապես, այս գործում դատարանը վճռեց, որ խաղաքարտեր պատրաստելու բացառիկ իրավունքը Դարսինի շնորհիվ անվավեր է և սպօրինի: Դատարանը նաև վճռեց, որ այս գործում առկա է մենաշնորհի ոչ ցանկալի հետևանքները՝ որակի անկում, գնի բարձրացում և աշխատելու ցանկության նվազեցում, որը վնաս է հասցնում ոչ միայն այդ ոլորտի առևտրականներին, այլև վնասում է բոլոր նրանց, ովքեր օգտագործում են կամ կարող են օգտագործել խաղաքարտերը¹⁶: Դարսին ընդդեմ Ալլինի գործը յուրահատուկ է մրցակցային իրավունքի պատմության մեջ, քանի որ այս գործի մանրամասն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ժամանակակից մրցակցային իրավունքում հաշվի են առնված այս գործի շրջանակներում դատարանի կողմից արված եզրակացությունն ու փաստարկները: Դարսին ընդդեմ Ալլինի գործից հետո տևական ժամանակաշրջան կատեցվեց բազմաբնույթ մենաշնորհների շնորհման գործընթացը: Այս նույն ժամանակահատվածում Ելիզբետա I-ին հաջորդեց Ջեյմս Առաջինը, որը հասարակության և պառլամենտի հետ լարված հարաբերությունները կարգավորելու և վերջիններիս աջակցությունը ստանալու նպատակով 1610 թվականին հրապարակեց «Առատաձեռնության հռչակագիրը» (Book of Bounty), որով արտահայտում էր ընդհանուր իրավունքի թշնամական վերաբերմունքը մենաշնորհների նկատմամբ՝ բացառությամբ որոշ բացառությունների, ինչպիսիք են արտոնագրերը հայտնագործությունների համար¹⁷: Չնայած նշված հռչակագրին՝ Ջեյմս Առաջինը շարունակեց լիցենզավորել նորանոր մենաշնորհներ: Այս ամենը, բնականաբար, առաջացրեց պառլամենտի խիստ դժգոհությունը, որի արդյունքում 1624 թվականին ընդունվեց «Մենաշնորհների մասին» ստատուտը, որով բոլոր մենաշնորհները համարվեցին թագավորության օրենքներին հակասող, անօրինական ու անվավեր, իսկ մենաշնորհների օգտագործումը՝ անթույլատրելի: Այս ստատուտում միաժամանակ նշվում էր, որ թույլատրվում է միայն նորարարությունների համար արտոնագրում 14 տարի ժամկետով՝ բացառիկ իրավունք ստացած գյուտարարներին արգելելով օրենքները խախտել, բարձրացնել ապրանքների գները, իսկ դատարանների իրավասությանն էր թողնվում մենաշնորհներին առնչվող վեճերի կարգավորումը: Ինչ վերաբերում է արդեն գործող մենաշնորհներին, ապա դադարեցվում էին

բոլոր արտոնագրերը, բացառությամբ նորարարությունների համար տրվածները, որոնց ժամկետը և սահմանափակվում էր 14 տարով¹⁸: Այս ստատուտի ընդունումը կարգավորեց պառլամենտի և միապետի միջև երկարատև վեճը: Իրադրությունը փոխվեց 1685 թվականին՝ Իստ Ինդիա Քոմպանին ընդդեմ Թոմաս Սենդիսի (East India Company vs. Thomas Sandys-case against monopolies) գործով դատարանի վճռից հետո, երբ դատարանը տարանջատում մտցրեց թագավորության ներսում մենաշնորհների և թագավորությունից դուրս գործունեություն իրականացնող մենաշնորհների միջև՝ նշելով, որ արդյունավետորեն կարող է մրցակցել միայն այն ընկերությունը, որը ունի ամուր դիրք¹⁹: Դատարանի կողմից արված այս փաստարկը իր գործածությունն է գտել մրցակցության, արդյունաբերական քաղաքականության և ազգային չեմպիոնների փոխհարաբերակցության վերաբերյալ ժամանակակից բանավեճերում: Դատարանի նշված վճռին հաջորդեց անգլիական արտադրողների մրցունակության անկումը միջազգային շուկաներում, որին հաջորդեց 1772 թվականի՝ մենաշնորհներն արգելող օրենքների փոփոխությունը, իսկ մինչև 1844 թվականը այդ բոլոր օրենքներն ուժը կորցրած ճանաչվեցին այն հիմնավորմամբ, որ մենաշնորհների արգելման օրենքներն իրենց նպատակին չեն ծառայել, ավելին՝ մենաշնորհի նկատմամբ արգելքի կիրառումը պատճառ է հանդիսացել առևտրի արգելմանը և գների բարձրացմանը: Այս ժամանակից ի վեր ինչպես Անգլիայում, այնպես էլ ժամանակակից բոլոր պետություններում մենաշնորհ (գերիշխող) դիրք ունենալը չի արգելվում, այլ արգելվում է գերիշխող դիրքի չարաշահումը:

Մենաշնորհի նկատմամբ արգելքի վերացմանը զուգընթաց Անգլիայում դատական նախադեպերի միջոցով ձևավորվում էր անգլիական ընդհանուր իրավունքի առևտրի սահմանափակման դոկտրինը, որը ժամանակակից մրցակցային իրավունքի ուղղակի նախատիպն է²⁰: Առևտրի սահմանափակման դոկտրինը առաջնորդվում է երկու հիմնական սկզբունքներով՝ արգելել այն համաձայնությունները, որոնք հակասում են հանրային շահին և թույլատրել միայն այն դեպքում, երբ հիմնավորվի համաձայնությունների ողջամտությունը (այսինքն՝ հիմնավորվի, որ այդ համաձայնության արդյունքում վնաս չի հասցվում համաձայնության կողմերին և հասարակությանը (մասնավորապես՝ այդ ապրանքի կամ ծառայության գնորդին)²¹:

19-րդ դարի վերջին ԱՄՆ-ում սկսվեց ժամանակակից մրցակցային իրավունքի ձևավորումը: Այս ժամանակաշրջանում ձևավորվել էր հզոր հակամենաշնորհային օրենսդրություն ունենալու կողմնակիցների մի մեծ բանակ: Նրանք շարունակա-

բար պնդում էին, որ անհրաժեշտ է ապահովել ազատ մրցակցություն և հնարավորություններ ստեղծել անհատ ամերիկացիների համար հիմնադրելու իրենց բիզնեսները, ինչը կնպաստի ԱՄՆ-ի տնտեսական զարգացմանը: Այս ուղղության ջատագովներից էր նաև սենատոր Ջոն Շերմանը, որը հեղինակեց և նախաձեռնեց ակտի ընդունում 1890 թվականին, որով անօրինական էին համարվում մենաշնորհների ձևավորումը և առևտուրը սահմանափակելու փորձերը: Այս ակտը կոչվեց հեղինակի անունով՝ Շերմանի հակամենաշնորհային ակտ, որը մինչ օրս շարունակում է հանդիսանալ ԱՄՆ-ի մրցակցային իրավունքի հիմնասյունը. ներկայումս թեև Շերմանի հակամենաշնորհային ակտը շարունակում է ուժի մեջ մնալ, սակայն դատական նախադեպերի արդյունքում այլ կերպ է մեկնաբանվում այս ակտը՝ անօրինական համարվելով մենաշնորհի դիրքի չարաշահումը²²:

Շերմանի ակտի ընդունումից հետո դատարանի կողմից քննած առաջին հակամենաշնորհային գործը Նյու Ջերսիի Ստանդարտ Օիլ Քոմփանին ընդդեմ ԱՄՆ-ի գործն էր²³: Հայտնի ընկերակցություններ (trust) Ստանդարտ Օիլ Քոմփանին և Ջոն Ռոքֆելլերը 1870-80-ական թվականներին նավթի ոլորտում մենաշնորհի դիրք ձեռք բերեցին՝ մրցակից ընկերություններին ահաբեկելու և երկաթուղիների հետ գաղտնի գործարքներ կնքելու միջոցով ոլորտում թողնելով շատ քիչ թվով մրցակիցներ: ԱՄՆ-ի գերագույն դատարանի որոշմամբ Ստանդարտ Օիլ Քոմփանիի գործողությունները համարվեցին Շերմանի հակամենաշնորհային ակտի խախտում: ԱՄՆ-ի գերագույն դատարանը միաժամանակ Ստանդարտ Օիլ Քոմփանին ապախոշորացնելու վերաբերյալ որոշում կայացրեց, որով այս մենաշնորհը բաժանվեց շուրջ երեք տասնյակ միմյանց հետ մրցակցող ընկերությունների՝ ներառյալ Ինդիանայի Ստանդարտ Օիլ Քոմփանին, Նյու Ջերսիի Ստանդարտ Օիլ Քոմփանին, Նյու Յորքի Ստանդարտ Օիլ Քոմփանին, Կալիֆոռնիայի Ստանդարտ Օիլ Քոմփանին և այլն: Ստանդարտ Օիլ Քոմփանիի ապախոշորացումը հիմնավորելու նպատակով ԱՄՆ-ի Գերագույն դատարանը միաժամանակ կիրառեց «rule of reason»-ի սկզբունքը՝ նշելով, որ «ոչ բոլոր խոշոր ընկերությունները և մենաշնորհներն են չարիք, և դատարանը (ոչ թե գործադիր մարմինը) պետք է կայացնի այդ որոշումը. պետք է ապացուցվի խոշոր ընկերության (trust) գործողությունների արդյունքում այդ ընկերության մրցակիցներին և տնտեսական միջավայրին հասցված վնասը»²⁴: ԱՄՆ-ի Գերագույն դատարանը այս և մյուս այլ գործերում թեև որոշակիորեն մեկնաբանեց Շերմանի ակտը, այնուամենայնիվ, շարունակում էր անորոշ մնալ այն հարցը, թե մասնավորա-

պես որ գործողություններն են արգելված այս ակտով: Այս իրավիճակը դժվարություններ էր ստեղծում թե՛ գործարարների շրջանակում, որոնք չգիտեին ինչպիսի վարքագիծ դրսևորել, թե՛ պետական մարմինների համար, որոնք չգիտեին ընկերությունների որ գործողությունները վիճարկել դատարաններում²⁵: Այդ իսկ պատճառով 1914 թվականին ընդունվեց Էլեյտոնի ակտը (Clayton Act), որով ընդլայնվեցին կառավարության հնարավորությունները՝ կարգավորելու խոշոր ընկերությունների գործունեությունը և անհրաժեշտության դեպքում դիմելու դատարան՝ մենաշնորհները ապախոշորացնելու նպատակով: Այս ակտով միաժամանակ կառավարությունը իրավասություն էր ստանում՝ վերահսկելու համակենտրոնացումները, իսկ հակամենաշնորհային ակտերն այլևս կիրառելի չէին լինելու առևտրային միությունների նկատմամբ: Էլեյտոնի ակտով նաև արգելվեցին որոշ բիզնես գործողություններ (խտրական գների կիրառումը և լրացուցիչ՝ պայմանագրի հետ չառնչվող պայմանների և պարտավորությունների պարտադրումը), որոնք էականորեն խաթարում էին մրցակցությունը: Այս ակտի արդյունքում նաև հիմնադրվեց Դաշնային Առևտրային Հանձնաժողովը (Federal Trade Commission), որը ծառայելու էր որպես մենաշնորհները կարգավորող այլընտրանքային մեխանիզմ՝ հարկադրելով բիզնեսներին համաձայնել «Համաձայնեցված վարքագծի կանոններին»²⁶:

Մենաշնորհների դեմ պայքարը ԱՄՆ-ում շարունակվում էր մեծ ինտենսիվությամբ: Մրցակից բազմաթիվ ընկերությունների գործադիր մարմնի ղեկավարներ գաղտնի համաձայնություն կնքելու և անօրինական գներ սահմանելու համար ազատագրվեցին դաշնային բանտերում: ԱՄՆ-ում մրցակցային քաղաքականության այս բարձր ակտիվությունը, որը զուգակցվում էր կոռուպցիայի դեմ ակտիվ պայքարով, տևեց 1890-ական թվականներից մինչև 1920-ական թվականները և անվանվեց «Առաջընթացի դարաշրջան» (Progressive Era), որի ավարտից հետո խոշոր ընկերությունների նկատմամբ թշնամական վերաբերմունքը մեղմացավ: Այսպիսի մեղմացման վառ օրինակ էր Ֆորդ Մոթոր Քոմփանիի օրինակը, որը թեև մենաշնորհի դիրք էր զբաղեցնում ավտոմեքենաների արտադրության ոլորտում, սակայն կառավարության կողմից հանդուրժողական վերաբերմունք էր ցուցաբերվում այս ընկերության նկատմամբ: Հանդուրժողական այս վերաբերմունքը պայմանավորված էր Ֆորդ Քոմփանիի կողմից ԱՄՆ-ի քաղաքացիների համար հազարավոր աշխատատեղերի ստեղծմամբ, ազգային արտադրանքի արդունավետության բարձրացմամբ՝ նպաստելով միաժամանակ աշխատավարձերի բարձրացմանը միլիոնավոր մատ-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

չելի մեքենաների արտադրությամբ, որը ԱՄՆ-ի արտադրանքի մրցունակությունը բարձրացրել էր միջազգային շուկաներում: ԱՄՆ-ի կառավարությունը միաժամանակ 1920-ական թվականների վերջին նախաձեռնեց ինքնակառավարվող առևտրային միությունների ստեղծումը, միջոցառումներ իրականացրեց բիզնես համագործակցությունը խթանելու համար և նախաձեռնեց Դաշնային Առևտրային Հանձնաժողովի և օրինապահ գործարար շրջանակի միջև սերտ համագործակցությունը: Տնտեսական ճգնաժամի հետևանքները հաղթահարելու համար 1933 թվականին ընդունվեց «Ազգային արդյունաբերության վերականգնման մասին» ակտը, որով նախատեսվում էր ավելացնել եկամուտը, աշխատավարձերը և գները, սակայն շուտով՝ 1935 թվականին, այս ակտի գործունեությունը դադարեցվեց այն պատճառաբանությամբ, որ այս քաղաքականությունը հանգեցրել է շուկաներում կենտրոնացվածության բարձրացմանը և տնտեսության տարբեր ոլորտների մոնոպոլիզացմանը: Այս քաղաքականության դադարեցմանը հաջորդեց Ռոբինսոն-Փեթմանի (Robinson-Patman Act) ակտի ընդունումը, որով խտրական գեղչերի կիրառումը, խտրական գների կիրառումը համարվում էին անօրինական:

Տնտեսական մրցակցության պաշտպանության նպատակով ակտերի ընդունմանը զուգընթաց ԱՄՆ-ի դատարանների վերաբերմունքը ևս սկսեց փոխվել հակամենաշնորհային օրենքների նկատմամբ: Այսպես, օրինակ, Յունայթիդ Սթեյթսն ընդդեմ Բոլումբիա Սթիլ Բորիորեյշնի (United States vs. Columbia Steel Corporation)²⁷ գործում ԱՄՆ-ի Գերագույն Դատարանն ամրագրեց մրցակցային օրենքների՝ որպես ԱՄՆ-ում ազատ ձեռնարկատիրության պաշտպանության համար «ազատությունների խարտիայի» կարևորագույն դերը: Այս նույն գործի շրջանակներում դատավոր Դուգլասը իր հատուկ կարծիքն (dissenting opinion) է հայտնել՝ նշելով, որ հակամենաշնորհային օրենքների նպատակը ոչ միայն սպառողների պաշտպանությունն է, այլև արգելելը մենաշնորհի դիրք ունեցող ընկերությունների կողմից շուկան վերահսկելու նպատակով շուկայական իշխանության օգտագործումը:

Տնտեսական մրցակցության պաշտպանության նպատակով հետագա գործերի քննումը ԱՄՆ-ում ամրագրեց այն հաստատականությունը, որ մրցակցային շուկայական հարաբերությունների արդյունքում հաստատվում է արդարություն և ազատություն բոլորի՝ թե՛ սպառողների, թե՛ ընկերությունների համար: Միաժամանակ, 1970-ական թվականներին ԱՄՆ-ի կառավարությունը մրցակցային քաղաքականության առաջնահերթություն

դարձրեց անբարեխիղճ մրցակցության գործողությունների արգելումը, որի հետևանքով վնաս էր հասցվում սպառողներին: 1976 թվականին ընդունվեց Հարթ Սքոթ Ռոդինոյի ակտը (Hart Scott-Rodino Act), որով բարեփոխումներ էին իրականացվում հակամենաշնորհային օրենսդրության մեջ՝ ներդնելով համակենտրոնացումների հայտարարագրման համակարգը և Դաշնային Առևտրային Հանձնաժողովին (Federal Trade Commission)՝ Արդարադատության Դեպարտամենտի հետ համատեղ վերապահելով համակենտրոնացումների վերահսկման լիազորություններ:

Ներկայումս ԱՄՆ-ի մրցակցային իրավույթի կիրարկումն իրականացվում է մրցակցային մարմինների՝ Դաշնային Առևտրային Հանձնաժողովի և Արդարադատության Դեպարտամենտի կողմից, իսկ մրցակցային քաղաքականությունն իրականացվում է գերիշխող դիրքի չարաշահումները և հակամրցակցային համաձայնությունները արգելելու, համակենտրոնացումները վերահսկելու, անբարեխիղճ մրցակցությունն արգելելու ուղղությամբ՝²⁸ Վերոնջյալի վերաբերյալ հարկ է նշել, որ գերիշխող դիրքի չարաշահումները և հակամրցակցային համաձայնությունների կնքումը ԱՄՆ-ում ենթադրում է քրեական պատասխանատվության միջոցների կիրառում, որի վերաբերյալ որոշում են կայացնում ԱՄՆ-ի դատարանները, որոնք նաև որոշում են կայացնում գերիշխող դիրք զբաղեցնող ընկերությունների ապախոչորացման վերաբերյալ՝²⁹ Տվյալ պարագայում ԱՄՆ-ի մրցակցային մարմինը՝ Արդարադատության Դեպարտամենտի Հակամենաշնորհային Ստորաբաժանումը, հանդես է գալիս դատախազության դերում: Միաժամանակ, մրցակցային օրենսդրության նշված իրավանորմների խախտումը ենթադրում է քաղաքացիական հայցերի ներկայացում դատարաններ՝ վնասի փոխհատուցման նպատակով: ԱՄՆ-ի անբարեխիղճ մրցակցության արգելման օրենսդրության խախտումների դեպքում ԱՄՆ-ի Դաշնային Առևտրային Հանձնաժողովը կարող է հանձնարարականներ տալ իրավախախտ ընկերություններին կամ քաղաքացիական հայցեր ներկայացնել ԱՄՆ-ի դատարաններ՝ (մասնավորապես՝ District Court of Circuit) քաղաքացիա-իրավական տուգանքների (civil penalty) կամ արգելանքի միջոցներ (preliminary injunctions) կիրառելու, ինչպես նաև սպառողներին հասցված վնասների փոխհատուցման նպատակներով: Ինչ վերաբերում է համակենտրոնացումների վերահսկողությանը, ապա հայտարարագրման ենթակա համակենտրոնացումների չհայտարարագրման դեպքում ԱՄՆ-ի մրցակցային մարմինները քաղաքացիական հայց են ներկայացնում դատարաններ՝ պատասխանա-

տու պաշտոնատար անձանց նկատմամբ քաղաքացիա-իրավական տուգանքների կիրառման կամ արգելված համակենտրոնացումը գործի չդնելու հանձնարարական ստանալու նպատակով³⁰: ԱՄՆ-ի մրցակցային օրենսդրության առանձնահատկությունը կայանում է նաև նրանում, որ բացի վերոնշյալ մրցակցային մարմիններից, ԱՄՆ-ի գլխավոր դատախազները ևս մասնակցում են մրցակցային օրենսդրության կիրարկմանը, սակայն նահանգային մակարդակում, և մասնավոր անձինք՝ ԱՄՆ-ի դատարաններ վնասի փոխհատուցման հայցեր ներկայացնելու միջոցով:

Եվրոպական պետություններում 20-րդ դարի սկզբին թեև օրենքների որոշ դրույթներ կարգավորում էին տնտեսական մրցակցությունը որոշ ուղղություններով, այնուամենայնիվ, ԱՄՆ-ում Շերմանի ակտի ընդունումը և հետագայում մրցակցային օրենսդրության կատարելագործումը էական ազդեցություն ունեցան եվրոպական պետություններում մրցակցային իրավունքի զարգացման վրա: Այսպես, օրինակ, Գերմանիայում 1923 թվականին ընդունվեց «Կարտելների մասին» օրենքը՝ կանխելու համար հակամրցակցային համաձայնությունների միջոցով գների բարձրացումը: Սակայն, այս օրենքի առանձնահատկությունը կայանում էր նրանում, որ հակամրցակցային համաձայնությունները չէին արգելվում, այլ պարզապես կարտելների պետական գրանցման օրենսդրական պահանջ էր ամրագրվել, որի միջոցով պետությունը վերահսկողություն էր իրականացնում կարտելների նկատմամբ՝ կարտելների կողմից շուկայական իշխանության չարաշահումը թույլ չտալու նպատակով: Այս օրենքը, սակայն, արդյունավետ չգործեց, քանի որ այս օրենքին հաջորդեց 1930 թվականի մեծ տնտեսական ճգնաժամը և Նացիստական ռեժիմը, որոնց պայմաններում կարտելների գոյությունը դարձավ անխուսափելի: Գերմանիայում տնտեսական մրցակցության պաշտպանության նպատակով համապատասխան օրենքեր ընդունվեցին միայն Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո Եվրոպական ընկերակցության անդամակցության շրջանակներում՝ 1957 թվականին: Եվրոպական հաջորդ պետությունը, որտեղ 20-րդ դարի սկզբին առկա էին մրցակցության պաշտպանության կարգավորումներ, Անգլիան էր, որտեղ 1919 թվականի «Սպեկուլյացիայի մասին» ակտով (Profiteering Act) արգելվում էր գների չհիմնավորված բարձրացումը: Անգլիայում ևս Եվրոպական ընկերակցության ստեղծումից հետո ընդունվեց տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրությունը, և ստեղծվեց համապատասխան մրցակցային մարմինը³¹: Եվրոպական մայրցամաքում մրցակցային իրավունքի զարգաց-

մանը, ինչպես նաև տնտեսական մրցակցության պաշտպանության մարմինների հիմնադրմանը նպաստեց 1957 թվականին Եվրոպական տնտեսական ընկերակցության (European Economic Community) հիմնադրումը, որի հիմնական նպատակներից էր միասնական շուկայի ստեղծումը: Այս հիմնական նպատակի իրագործման համար անհրաժեշտ էր տնտեսական մրցակցության պաշտպանությունն ապահովող իրավական գործիքակազմի ամրագրումը, որն էլ արվեց Հռոմի պայմանագրի 85-րդ և 86-րդ հոդվածներով՝ գերիշխող դիրքի չարաշահումների, ինչպես նաև հակամրցակցային համաձայնությունների արգելմամբ: Այնուհետև, եվրոպական մրցակցային օրենսդրության շրջանակը ընդլայնվեց համապատասխան կանոնակարգերի, դիրեկտիվների և ուղեցույցների ընդունմամբ, դատական նախադեպերով, ինչպես նաև Եվրոպական հանձնաժողովին տնտեսական մրցակցության պաշտպանության իրավասությունների օժտմամբ: Եվրոպական Միության ժամանակակից մրցակցային իրավունքի հիմնաքարերը ևս համարվում են Հռոմի պայմանագրի 85-րդ և 86-րդ հոդվածները (ներկայիս Լիսաբոնի պայմանագրի 101-րդ և 102-րդ հոդվածները (TFEU)), որոնցում ամրագրված իրավանորմերը ընդլայնված մեկանբանություն են ստացել ԵՄ ընդհանուր իրավասության և Եվրոպական արդարադատության դատարանների նախադեպային որոշումներով: Ներկայումս ԵՄ մրցակցային իրավունքը կիրարկվում է գերիշխող դիրքի չարաշահումը և հակամրցակցային համաձայնությունները արգելելու, համակենտրոնացումների և պետական օժանդակության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու ուղղություններով: Ինչ վերաբերում է անբարեխիղճ մրցակցությանը, ապա ԵՄ մակարդակով գործում է ԵՄ անբարեխիղճ մրցակցության արգելման օրենսդրություն, որի կիրարկումը, սակայն, իրականացվում է ազգային մակարդակում ԵՄ անդամ պետությունների կողմից: Վերոգրյալի վերաբերյալ հարկ է նաև նշել, որ ԵՄ մրցակցային օրենսդրության խախտումը ենթադրում է վարչական պատասխանատվության միջոցների կիրառում՝ միաժամանակ վնասի հատուցման քաղաքացիական հայցեր ներկայացնելու հնարավորությամբ: Միաժամանակ, Եվրոպական հանձնաժողովը օժտված է գերիշխող դիրք զբաղեցնող ընկերությունների ապախոչորացման վերաբերյալ որոշումներ ընդունելու իրավասություններով³²:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետությանը, ապա թեև 1995 թվականի ՀՀ սահմանադրության 8-րդ հոդվածով երաշխավորվում էր ազատ տնտեսական մրցակցությունը, այնուամենայնիվ ՀՀ-ում մրցակցային իրավունքի ձևավորու-

www.journal.lawinstitute.am

մը սկսվեց 2000 թվականին «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունմամբ, այդ օրենքի հետագա փոփոխություններով և լրացումներով, ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի իրավակիրառման գործունեությամբ և նշված հանձնաժողովի կողմից ենթաօրենսդրական ակտերի ընդունմամբ: ՀՀ-ում մրցակցային իրավունքի զարգացմանը նպաստեցին նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքում (հոդված 12-րդ) քաղաքացիական իրավունքների իրականացման միջոցով տնտեսական մրցակցության սահմանափակման, գերիշխող դիրքի չարաշահման արգելմամբ, ՀՀ քրեական օրենսգրքով (հոդված 195-րդ) հակամրցակցային համաձայնությունների համար քրեական պատասխանատվության սահմանմամբ, 2005 թվականին ՀՀ սահմանադրական փոփոխությունների արդյունքում գերիշխող դիրքի չարաշահման և անբարեխիղճ մրցակցության արգելմամբ, 2015 թվականի Հայաստանի Հանրապետության սահմանադրության փոփոխություններով տնտեսական մրցակցության՝ որպես սահմանադրությամբ երաշխավորված սկզբունք սահմանելով, միաժամանակ գերիշխող դիրքի չարաշահման, անբարեխիղճ մրցակցության և հակամրցակցային համաձայնությունների արգելմամբ³³: ՀՀ-ում տնտեսական մրցակցության պաշտպանությունն իրականացվում է գերիշխող դիրքի չարաշահման, հակամրցակցային համաձայնությունների և անբարեխիղճ մրցակցության արգելման, համակենտրոնացումների և պետական օժանդակության նկատմամբ վերահսկողության իրականացման միջոցով³⁴:

Այսպիսով, սույն հոդվածի շրջանակներում իրականացված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ թեև մրցակցային իրավունքի ձևավորումը սկսվել է ԱՄՆ-ում Շերմանի ակտի ընդունումից հետո, այնուամենայնիվ, դեռևս անտիկ ժամանակաշրջանում աթենական իրավունքով, հռոմեական իրավունքով, հետագայում եվրոպական քաղաքապետությունների օրենսդրությամբ նախատեսվում էին նորմեր՝ տնտեսական մրցակցության տարբեր ուղղությունները կարգավորելու նպատակով: Նշված նորմերի ուսումնասիրությունը նաև ներկայացնում է իրավական մտքի զարգացումը՝ տնտեսական մրցակցությունը պաշտպանելու տեսանկյունից, և ցույց է տալիս այդ նորմերի բովանդակային նմանությունը ժամանակակից մրցակցային իրավունքի նորմերին: Հատկանշական է դիտարկել նաև մենաշնորհների արգելման Անգլիայի փորձը, որը ցույց տվեց, որ մենաշնորհների դեմ պայքարը և արգելումը վնասակար է պետության տնտեսության համար, և որի արդյունքում հաստատվեց այն

համոզմունքը, որ անհրաժեշտ է պայքարել մենաշնորհների չարաշահումների դեմ: Միաժամանակ, ԱՄՆ-ի և Եվրոպական Միության մրցակցային իրավունքների զարգացման ուսումնասիրությունը և ՀՀ-ի մրցակցային իրավունքի հետ համեմատականի իրականացումը թույլ է տալիս եզրահանգել, որ ՀՀ-ում մրցակցային իրավունքը ձևավորվել է ԱՄՆ-ի և ԵՄ մրցակցային իրավունքների արդեն իսկ ձևավորված մոդելների հիման վրա, որի արդյունքում ՀՀ-ում տնտեսական մրցակցության օրենսդրության խախտումը ենթադրում է ոչ միայն վարչական (ԵՄ մրցակցային իրավունքի մոդել), այլև քրեական և քաղաքացիական (ԱՄՆ-ի մոդել) պատասխանատվության միջոցների կիրառման հնարավորություններ: Նշվածի վերաբերյալ հարկ է նաև նշել ՀՀ մրցակցային իրավունքի և ԵՄ մրցակցային իրավունքի նմանությունը ինչպես մրցակցային օրենսդրության կիրարկման ուղղությունների տեսանկյունից, այնպես էլ մրցակցային մարմինների՝ ապախոշորացման վերաբերյալ որոշում կայացնելու իրավասության հնարավորությամբ:

¹ Տե՛ս Մույն ուսումնասիրությունն իրականացվել է Գիտության և կրթության հայ ազգային հիմնադրամի (ԳԿՀԱՀ, Նյու Յորք, ԱՄՆ) կողմից տրամադրված դրամաշնորհի շրջանակներում:

² Տե՛ս Wayne R. Duhman, *The Athenian Crain Merchants 386*, US Department of Justice Publications, EAG 07-2, January 2007, pp. 2-3.

³ Տե՛ս Lambros E. Kotsiris, *An Antitrust case in Ancient Greek Law*, *The International Lawyer*, vol. 22, no. 2, 1988, pp 453-457.

⁴ Տե՛ս William Alexander Hunter, *A Systematic and Historical Exposition of Roman Law in the Order of Code*, London, Sweet and Maxwell Limited, Forth Edition, 1920, page 1067; Barry E. Hawk, *International Antitrust Law and Policy*, Fordham Corporate Law, 2003, pp. 13-14:

⁵ Տե՛ս William Alexander Hunter, *A Systematic and Historical Exposition of Roman Law in the Order of Code*, London, Sweet and Maxwell Limited, Forth Edition, 1920, page 1067.

⁶ Տե՛ս Barry E. Hawk, *International Antitrust Law and Policy*, Fordham Corporate Law, 2003, page 14:

⁷ Տե՛ս նույն տեղում (Barry E. Hawk) էջեր 14-15.

⁸ Տե՛ս Richard Orme Wilberforce; *The Law of Restrictive Practices and Monopolies*, Sweet and Maxwell, 1966, pp. 21-23.

⁹ Տե՛ս Lee McGowan, *The Antitrust Revolution in Europe: Exploring the European Commission's Cartel Policy*, Edward Elgar Publishing, Jan 1, 2010, page 26.

¹⁰ Տե՛ս Sally Harvey, *Domesday: Book of Judgement*, Oxford University Press, 2014, pp. 13-25, 202-220.

¹¹ Foresteel- սպրանքների գների արհեստական բարձրացում սպրանքները մինչև շուկա հասնելը գնելու միջոցով:

¹² Տե՛ս Gwen Seabourne, *Royal Regulation of Loans and Sales in Medieval England: Monkish Superstition and Civil Tyranny*, Boydell Press, 2003, pp. 71-77.

¹³ Տե՛ս Sir William Blackstone, *Commentaries on the Laws of England: In Four Books*, Volume 4, A. Strahan and W. Woodfall, law-printers to the King, pp. 159-160.

¹⁴ Տե՛ս William Hyde Price & Carroll Taney Bond, *The English Patents of Monopoly*, The Lawbook Exchange, Ltd., 2005, pp. 6-9.

¹⁵ Miller, Sidney T. "The Case of the Monopolies: Some of Its Results and Suggestions." *Michigan Law Review*, vol. 6, no. 1, 1907, pp. 5-8, www.jstor.org/stable/1272664 .

¹⁶ Տե՛ս Sandra MarocoColino, *Competition Law of the EU and UK*, 7th edition, Oxford University press, 2011, page 4; Miller, Sidney T. "The Case of the Monopolies: Some of Its Results and Suggestions." *Michigan Law Review*, vol. 6, no. 1, 1907, pp. 5-8, www.jstor.org/stable/1272664.

¹⁷ Տե՛ս Klaus Boehm & A. Silberston, *British Patent System: Volume 1, Administration*, Book 1, Cambridge University Press, 1967, pp.16.

¹⁸ Տե՛ս նույն տեղում (Klaus Boehm & A. Silberston), էջ 17.

¹⁹ Տե՛ս Thomas Jones Howell, William Cobbett, David Jardine, T. C. Hansard for Longman, Hurst, Rees, Orme, and Brown, *A Complete Collection of State Trials and Proceedings for High Treason and Other Crimes and Misdemeanors from the Earliest Period to the Year 1783*, 1816, pp. 711-770.

²⁰ Առևտրի սահմանափակման մասին դոկտրինի վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն տես John Dyson Heydon, *The Restraint of Trade Doctrine*, LexisNexis Butterworths, 2008 ??????:

²¹ Տե՛ս Sandra Marco Colino, *Competition Law of the EU and UK* Oxford University Press, 2011, pp. 454-456.

²² Տե՛ս Donald T. Critchlow, Philip R. VanderMeer, and Series edited by Paul Boyer, *The Oxford Encyclopedia of American Political and Legal History*, volume 1, Oxford University Press, 2012, pp. 51-52.

²³ Case of *Standard Oil Co. of New Jersey v. United States (1911)*, <https://www.law.cornell.edu/supremecourt/text/221/1>, <https://legallegacy.wordpress.com/2009/05/15/may-15-1911-%E2%80%93-the-u-s-supreme-court-decided-standard-oil-co-of-new-jersey-v-united-states/>

²⁴ Տե՛ս նույն տեղում (Case of *Standard Oil Co. of New Jersey v. United States (1911)*).

²⁵ Տե՛ս Douglas F. Broder, *U.S. Antitrust Law and Enforcement: A Practice Introduction*, Oxford University Press, 2012, page 15.

²⁶ Տե՛ս Debra J. Pearlstein, Robert E. Bloch, Ronan P. Harty, Paul B. Hewitt, Harvey I. Saferstein, James I. Serota, Willard K. Tom, *Antitrust Law Developments*, American Bar Association, Volume 1, 2002, pp. 131-135.

²⁷ United States vs. Columbia Steel Corporation case (1948), <https://supreme.justia.com/cases/federal/us/334/495/case.html>

²⁸ Retrieved from US Federal Trade Commission website <https://www.ftc.gov/enforcement> , retrieved from US Department of Justice/Antitrust Division website <https://www.justice.gov/atr/mission>, May 28, 2016.

²⁹ Տե՛ս Douglas F. Broder, *U.S. Antitrust Law and Enforcement: A Practice Introduction*, Oxford University Press, 2010, pp. 2-3

³⁰ Տե՛ս նույն տեղում (Douglas F. Broder) էջեր 172-205.

³¹ Տե՛ս Maximo Motta, *Competition Policy: Theory and Practice*, Cambridge University Press, 2009, pp. 10-11.

³² Տե՛ս Alison Jones and Brenda Suftrin, *EU Competition Law, texts, cases and materials*. 6th edition, United Kingdom, Oxford University Press, 2014, pp. 54-114. Retrieved from European Commission website, http://ec.europa.eu/competition/index_en.html, April 5, 2016.

³³ Retrieved from www.arlis.am, June 25, 2016.

³⁴ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք:

Асмик Тигранян

Главный специалист отдела административного
производства юридического управления ГКЗЭК РА
Советник 3-его класса гражданской службы РА
Магистр права

РЕЗЮМЕ

Эволюция и формирование конкурентного права

В данной статье автором представлена эволюция норм конкурентного права с античного периода до наших дней, были изучены и проанализированы судебные прецеденты, законы и другие правовые акты, а также имплементация этих актов. В данной статье одновременно рассматривается формирование современного конкурентного права США, ЕС и Армении, проводится сравнительный анализ, позволяющий выявить сходства и различия между разными моделями конкурентного права.

Ключевые слова: экономическая конкуренция, конкурентное право, римское право, афинское право, конкурентные органы, монополия, конкурентное право США, конкурентное право ЕС, конкурентное право РА.

Hasmik Tigranyan

Chief Specialist of the administrative proceeding
division of the legal department of the SCPEC RA
Councillor of the 3-rd class of Civil Service of RA
Master of Laws

SUMMARY

Evolution and formation of competition law

In this article the author presents the evolution of norms of competition law from antic period to present days, by researching and analyzing laws and other legal acts, implementation of those acts, by analyzing case law. This article meanwhile studies formation of contemporary competition law in the USA; in EU and in Armenia and via comparative analysis illustrates similarities and differences between different models of competition law.

Keywords: economic competition, competition law, Roman law, Athenian law, competition authorities, monopoly (dominant), US antitrust law, EU competition law, competition law of the Republic of Armenia.